Երկրորդ ընթերցում
ՆԱԽԱԳԻԾ

Պ-178-13.12.2012,29.01.2013-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության 2004թ. մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «5-րդ» մասով.

«5. Իրավական օժանդակությունը տրամադրվում է հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի կողմից նշանակված փաստաբանի կողմից: Իրավական օժանդակության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: »:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				
	Առաջարկության հեղինակը	**Նախագծի փոփոխվող մասը**	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «ՀՕ-80» թիվը փոխարինել «ՀՕ-80-Ն» թվով:	Առաջարկն ընդունված է
2.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Դ. Հարությունյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ օրենք)» բառերը:	Առաջարկն ընդունված է
3.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Դ. Հարությունյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «5» թիվը փոխարինել «5-րդ» բառով:	Առաջարկն ընդունված է
4.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Դ. Հարությունյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:	Առաջարկն ընդունված է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «ՀՕ-29» թիվը փոխարինել «ՀՕ-29-Ն» թվով:	Առաջարկն ընդունված է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«41-րդ հոդվածի» բառերը փոխարինել «41-րդ հոդվածի 5-րդ մասը» բառերով:	Առաջարկն ընդունված է

3.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Դ. Հարությունյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ օրենք)» բառերը:	Առաջարկն ընդունված է
4.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան Դ. Հարությունյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «12» թիվը փոխարինել «12-րդ» բառով:	Առաջարկն ընդունված է